ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԼԵՈՆԻԴ ԱԶԳԱԼԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 200 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Երևան, Դավիթաշեն Ibաղ.

Հեռ. 36.90.36
E-mail: dproc200@mail.ru

№ 165

13.07.2023թ.

«ԷՍԿԱ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ տնօրեն
Ա. Հարությունյանին
ք. Երևան Ներքին Շենգավիթ 7-րդ փ 5 տ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Երևանի Լ. Ազգալդյանի անվան Հ 200 դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ Պատվիրատու) և «ԷՍԿԱ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 19.05.2023 թվականին կնքված «Ե200ՀԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով կապալային աշխատանքի պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում կատարել N 1 հավելվածով՝ ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքներ (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքը և վճարել դրա համար: Աշխատանքի իրականացման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի հ. 2 հավելվածի աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքի կատարման ժամկետ է սահմանված Պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.06.2023 թվականը:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է այն: Պայմանագրի 3.1.2 կետի համաձայն Կատարողի կողմից Պատվիրատուին առաջարկ է արվել, չնայած մատակարարման ժամկետները խախտելուն, հանդիպել և քննարկել Պայմանագրի կատարման խելամիտ ժամկետ սահմանելու հնարավորությունը: Այս նպատակով Պատվիրատուն պատվիրված նամակով (29.06.2023թ < 26675724) առաջարկել է հանդիպել «Երևանի Լ. Ազգալդյանի անվան < 200 դպրոց» ՊՈԱԿ-ի վարչական շենքում՝ Դավթաշեն 1-ին թաղամաս հասցեով (Պայմանագրում նշված հասցե) և սահմանել խելամիտ ժամկետ աշխատանքները իրականացնելու համար: Նամակով որպես հանդիպման օր նշանակվել է 06.07.2023թ., սակայն Կատարողի կողմից որևէ արձագանք չի եղել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները, որոնք սահմանված են Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելվածով (Տեխնիկական բնութագրով)՝ «Երևանի Լ. Ազգալդյանի անվան < 200 դպրոց» ՊՈԱԿ-ը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի լուծում է պայմանագիրը: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության

2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման գումարը՝ համապատասխանաբար 397138 ՀՀ դրամ և 595707 ՀՀ դրամ «Երևանի Լ. Ազգալդյանի անվան Հ 200 դպրոց» ՊՈԱԿ-ի 900018003625 հաշվեհամարին, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

-մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա

պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

«Երևանի Լ. Ազգալդյանի անվան
< 200 դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի Ժ/Պ՝ Գ. Կարապետյան